ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2016 թվականի N:266-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016

թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գտաշեն համայնքի ղեկավարի 2016 թվականի ապրիլի 28-ի թիվ 010-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի նիստի թիվ 10 արձանագրությունը, ծնողական խորհրդի 2016 թվականի մարտի 2-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, Լուսինե Մկրտչյանի 2016 թվականի փետրվարի 29-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գտաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Հերիքնազ Էգնատոսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամներ Մաքսիմ Շահբազյանի, Համազասպ Մարտիրոսյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գտաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Սամվել Էգնատոսյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Էմմա Ջանունցի, Հռիփսիմե Նազարյանի լիազորությունները:

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամ Տրդատ Պողոսյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված և 2014 թվականի դեկտեմբերի 8-ին Խորհրդի կազմում հաստատված Լուսինե Մկրտչյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Հերիքնազ Էգնատոսյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Համազասպ Մարտիրոսյանին, Վանիկ Սերոբյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գտաշեն համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Սամվել Էգնատոյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Էմմա Ջանունցին, Հռիփսիմե Նազարյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Վեռա Հարությունյանին, Սուզաննա Ակոպյանին:

4. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N108 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «30» N266-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՏԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Էգնատոսյան Հերիքնազ	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Մարտիրոսյան Համազասպ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Սերոբյան Վանիկ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Էգնատոսյան Սամվել	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Ջանունց Էմմա	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Նազարյան Հռիփսիմե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Հարությունյան Վեռա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Ակոպյան Սուզաննա	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է